

ՊԱՏՄԱԿԱՆ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՒ ԳԵՈՐԳԵԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ

(Դ ԴԱՐԻՑ ԽՆԻՉԵԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

Այս աղօղուտ գործունէութեան լուրը զովարար անձրեւի պէս տեղաց կրթութեան ծարաւի Հայ Հողինների վրայ, որոնք շտապեցին դէպի էջմիածին՝ մաս առնելու աշխատանքից կամ կրթուելու, իրենց Հերթին կրթութիւնը տարածելու համար խաւար մնացած տեղերում: Ս. Անանիայի Առաքաւորը հասաւ մեծ անունի ու բարձրութեան եւ պատօնապէս ճանաչուեց որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոսարանի գործող Վարդապետարանը: Այնտեղ պատրաստուեցին բազմաթիւ գործիչներ: Սերունդ պատրաստողներից մէկն էր Մելքիսեդեկ Վժանցին, որ Լիմ Անապատից գալիս է Ս. էջմիածին: Նա իր ժամանակի ամէնից պիտուն մարդն էր մեր պայմաններում: Նրա պալուստը հաւասարապէս ուրախալի էր մեծին եւ փոքրին: Վժանցին իր ուսուցչական գործունէութիւնը ծաւալում է Երեւանում է էջմիածնում: Եւ ինչէր յորժամ Մելքիսեթ վարդապետն կանխել էր ի դաս եւ ի քարոյ իրրի: յորժանս ուլիսից եւ Հեղեղաց ընթանայր բանն ի բերանոյ նորա, յորոյ ի մաստութեանն ամենեւեան ապուշ եղեալ՝ հիանային եւ բաղձային»(21):

Մելքիսեդեկ Վարդապետ Վժանցու դասախօսութիւնները ոգևորութիւն եւ հիացում են առաջ բերում իր ունկնդիրներին շարքերում, սակայն արդիւնքը համեմատաբար մեծ չէր, որովհետեւ նիւթը աշակերտների զլխից վեր էր մտում շատ անդամ, նրանք չունէին անհրաժեշտ նախապատրաստական պատրաստութիւնը եւ նեղ էր նրանց մտահորիզոնը յատկապէս «արտաքին դիտութիւններին մարզում: Դասախօսութիւնները համարեալ մտում էին անմարսելի եւ անհասկանալի: Այդ այդպէս էր մանաւանդ իմաստասիրութեան վերաբերելով դասախօսութիւնների հարցում: Դասապրքերն էլ անմատոյց էին եւ անհասկանալի: Աշակերտների ձեռքն էին տրւում է Դարի խրթին յունարան զպրոցի արտադրութեանց աղճատուած պատճէնները: Հակատակ այդ դժուարութիւններին, աշակերտները շարունակում էին աշխատել. «Այլ դայս արտաքին զրեանս յայն սակս յիշեմ եւ շնորհակալ լինիմ նմա, զի զայսպիսի ալլալաւիղ, եւ ալլատեսակ, եւ ալլանուն, եւ անընտել բանս, առանց վարժողի եւ թարց ուրուք ուսուցանողի՝ իւրովի եղիտ զամենայն ի սկզբանէ մինչև իսկ զկատարածն»(22):

Դարբիսելու սկնարկած այս «ալլանուն եւ անընտել» բացատրու-

(21) Դարբիսեցի, «Պատմութիւն», էջ 308:

(22) Դարբիսեցի. Յոյնը, էջ 307:

թիւնները վերադրուած են յունարան խրթնախօս դասագրքերին, որոնք իրենց թարգմանող մարդկանց համար շատ անդամ անհասկանալի էին մնացել, էլ ո՛ւր մնաց տասը դար յետոյ ապրող եւ գիտութեանց համն ու հոտը ի սպառ մոռացած սերունդներին, որոնք իրենց անունը հայրիւզրուած էին եւ տարբարական զազափտքն իսկ շունէին պղատոնականութեան կամ նոր-սղատոնականութեան մասին:

Այնուամենայնիւ Մելքիսեդէկ Վժանցին չի յուսահատուած եւ մեծ նուիրումով շարունակուած է իր դասախօսութիւնները Ս. Անանիայի Անապատում: Նա ուզի ի բոլին աշխատուած է իր պարզամիտ ունկնդիրներին ծանօթացնել Դաւթի Սահմանաց Գրքին, Պորփիրի Վերլուծութիւններին, Արիստոտելի Ստորոգութեան, Պերիարձենիասին, Ալիսարհացն եւ այլն:

Մելքիսեդէկի դասախօսութիւնները այնքան բարդ էին թուած իր աշակերտներին, որ նրանք հետագայում էլ առանց քաշուելու խոստովանում էին, իրենց համար այն ժամանակ դժուարիմաց թուացող այդ նիւթերի պարզութեան ի տես, իրենց շփաղանց խակ եղած լինելը: Ակինեան գրում է. «Հաւանական է կարծել, թէ ինչպէս Մեծ Անապատի եւ Լիմ Անապատի մէջ, նոյնպէս Հոս ամենահետաքրքրական երեւեցաւ դասախօսութիւնների նիւթը: Կը զրէ գոնէ Ոսկան թէ իրեն համար անմարտելի էին անոնք»(23):

Վժանցու դասախօսութիւնները այս ձեւով շարունակուած են մինչեւ այն ժամանակ, երբ Լեհաստանից վերադառնուած են Պաշատուր Կեսարացին եւ իրեն ընկերացող երիտասարդ արեղաները, որոնք զնայել էին պայքարելու լատինացեան դէմ եւ լատինական հոգեւորականութեան բոլանդակ կրթուած հրետանու դէմ ցոյց էին տուել միայն յարդեայ նիգալներ: Հայրենիք դառնալով, նրանք երդուել էին զինուել հակառակորդի բոլոր վէճերով եւ զերազանցել նրան իր իսկ վէճերի պատրաստութեան եւ գործածութեան ասպարէզում: Իսկ այդ անելու համար, նրանք շատ լաւ հասկանում էին, թէ պէտք էր յաղթահարել այսպէս ասած արտաքին գիտութիւններին:

Ս. Գրքի պարզ ընթերցումից բացի ուրիշ բան չհասկացող Հայ պատուիրակները Լեհաստանում իրենց առած դասը երրեք շմուռացան եւ յանդեցին ճիշդ եզրակացութեան. «մտացեալ թէ զայն, զոր գիտեն, ոչ է գիտութիւն, այլ պարտ է նոցա զարտաքին գիրան կարգալ», ասում է Դաւրիթեցին եւ աւելցնում նրանց հաստատ որոշումը. «Գնամք յէջմիածին առ Մելիքէթ Վարդապետն, զայլ ամենայն ինչ թողեալ՝ արտաքին գիրքն կարգամք ի նըմանէ: Եւ յորժամ հասին յէջմիածին առ ժամայն սկսան ի նոյն գործն ձեռն արկանել, եւ ոմանք եւս յեղբայրք ի միաբանիցն էջմիածին: Ընդ նոսին յարեցան ի զաս առնուլ. եւ յորժամ միաբանեալ եղբայրքն եկին առ Մելիքէթ Վարդապետն, եւ սկսան զաս առնուլ, նախ՝ գրեթականութիւնն զաս առին, զինի նորա զսահմանքն սկսան, եւ ապա զՊորփիրն, զՍտորոգութիւն, զՊերիարձենիասն, զԱլիսարհացն, զգովելին. զինի սոցա ամենեցուն զամենայն արգաց տօմարն»(24):

Էջմիածնի միաբաններից Վժանցուն աշակերտել են Սիմէոն Զուգալեցին եւ Ոսկան Իրեւանցին: Սիմէոնը Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի ժամանակ հանդիսանում է էջմիածնի Վարդապետարանի սիւնը, իսկ Ոսկանը սպազրութեան գործում մատուցանում է լաւագոյն ծառայութիւն, հրատա-

(23) Ակինեան, «Մոսկոս Կաթողիկոս», էջ 202:

(24) Դաւրիթեցի, Յայճը, էջ 399:

բակելով Աստուածաշունչը եւ ուրիշ գրքեր: Վժանցու համբարը այնքան մեծ էր, որ հետաւոր Լեհաստանից, Ղըրիմից գալիս էին իրեն լսելու:

Վժանցին գնահատեց ամօթապարտ մնացած արեղանների նախանձալուրովութիւնը եւ իր կարելին արեց դպացուած բացը փակելու: Պատմութիւնը ցոյց տուեց, որ երկու կողմից միացեալ այս ջանքը ի դուր չկորու: Հետագայում մրցութեան ասպարէզ դուրս եկած Հայ Հոգեւորականները իրենք կարող էին կարմրացնել հակառակորդին:

Այդ անկու համար հարկ էր պատրաստուել: Պատրաստուելու համար նրանք դիմեցին Մովսէս կաթողիկոսին. «Արեղայք եւ ընկերակիցք Ոսկանի, որք էին էջմիածին, յարեան ի վերայ կաթողիկոսին Մովսէսի ասելով, իսմ մեզ եւս հրաման տուր, զի զնացեալ յԵրեսան զղաս առցուք ի Մելիթաէթէն եւ կամ զնա բեր ի տեղիս, զի աստ ի մէջ էջմիածնի դաս ասացէ՞»(25):

Ուսումնասէր Մովսէս կաթողիկոսի յայթանակն էր դա: Պատուած չլր տղիտութեան քողը եւ ճանապարհը բաց էր գէպի լուսաւոր քարձուներէրը, եւ դա զանգուածների պահանջով եւ ո՛չ թէ վերեւի պարտադրանքով: Ի՛նչ խօսք, որ մեծադոյն խնդութեամբ նա բաւարարում է սուսմնասէր պատանիներին:

Բացի Ս. Անանիայի Անասպտից, նոյն շրջանում Յովհաննավանքումն էլ դործում էր մի ուրիշ դպրոց, որը նոյնպէս որոշ առումով նկատուած էր Մովսէս կաթողիկոսի վարդապետարան, բայց նուազ բարձրութեան վրայ էր գտնուում Ս. Անանիայից: Ժամանակակիցները Վժանցու վարած «Վարդապետարանը կոչում են «Համալսարան Կաթողիկոսարանի»:

Մովսէս կաթողիկոս անշքացած էջմիածինը նիւթապէս նորոգելուց բացի, այնտեղ հիմք է դնում Հոգեւորականներ պատրաստելու յատուկ բարձրագոյն մի դպրոցի, որտեղ, շնորհիւ Վժանցու դասախօսութիւնների գարգանտում են գտնու հրատմութիւնս արտաքին գրոց եւ արուեստ քերականութեան», որոնք ըստ Դուարիմեցու զբնաւին բարձեալ եւ անհետ լեալ էին»(26):

1632 թուականին վախճանուում է Մելիթսեղեկ Վժանցին եւ իր վախճանումով վերջ են գտնում այնքան հետաքրքրութիւն եւ աշխոյժ առաջացրած «արտաքին գիտութիւններ»ի դասերը:

Վժանցու աշակերտներից ամէնից յաջողն ու ամէնից նշանաւորը Հանդիսացաւ Սիմէոն Զուղայեցին, որը 1640 թուին, Փիլիպոս կաթողիկոսի օրով (1633–1655) վերադառնում է էջմիածին եւ ստանձնում նրա Վարդապետարանի տեսչութիւնը եւ արտաքին ուսմանց դասաւանդման պարտականութիւնները:

Ղուկաս Կարնեցին էլ այս դպրոցի սաներիցն է: Նա թողել է մի ձեռագիր, որի մէջ ամփոփել է աւանդուող արտաքին գիտութիւնների նիւթերը: Նոյն տեղում յիշատակում է նաեւ Յովհաննավանքի դպրոցը, խօսում նրա կազմակերպութեան մասին եւ Խաչատուր Կեսարացուն եւ Փիլիպոս Աղլապեղեցուն յիշատակում է որպէս բազմակից եղբայրների՝ «բազմաճնուտ արտաքին գիտութիւնների»: Թէև Դուարիմեցին խօսում է Յովհաննավանքի դպրոցի մասին, եւ ինչպէս տուեալներն էլ այդ են հաստատում, որ այն Կաթողիկոսարանի Վարդապետարան կարող ենք համարել, սակայն Խաչատուր Կեսարացին միշտ վարել է Յովհաննավանքի դպրանոցը, իսկ Փիլիպոս Աղլապեղեցին՝ էջմիածնի դպրոցը:

(25) Ալիմեան, «Ոսկան Եպիսկոպոս», էջ 284:

(26) Դուարիմեցի, նոյնը:

Մովսէս կաթողիկոսին յաջողուեց վերջ առ իմիամենի սղալի գրութեան եւ Հանդիսացաւ իմիամենի վերանորոգիչը, այնպէս որ Սաշաաուր կետարացի Վարդապետը իբրտունջ ունի տակաւ։ Վերկին լուսաւորիչ եղև Հայկազուն սեռիս, նորոգելով գտարք իմիամենին եւ զեղծեալ կարգս մեր, որ ի թուլութենէ յառաջացան(27)։

Կաթողիկոս լինելով եւ իբ մեռքի տակ ունենալով բաւական թուով գիտուն վարդապետներ, Մովսէս Տաթևացին ընդարձակեց եւ բարձրացրեց Յովհաննավանքի դպրոցը, այն պարճներով Կաթողիկոսարանի Վարդապետարան։ Այդ մասին Գաւրիթեցու մօտ կարգում ենք. «Այլ եւ Հոպելից սուրբ վարդապետս տէր Մովսէս կարգեաց դպրատուն ի մեծափառ սուրբ ուխտան Յօհաննավանք, ուր ժողովեաց մանկունս յուլիս, եւ զամենեցուն զմտիւն եւ զպետս Հոպայր, եւ մանկունքն անդրազ եւ անխափան ուսանէին զեկեղեցական ուսումն, եւ զգիրս ասասլաւաշունչս, եւ զմտասառիբականս, որք եղին ամենեքեան արք պիտանիբ եւ օգտակարք աշխարհի, վարդապետք, եպիսկոպոսք, եւ արեղայք, եւ երկցունք, եւ ամենայն վանօրայք, որք ամայացեալք ի խաւարի կային, եղին լցեալք միաբանօք, արեղայիք, եւ կրօնաւորօք, եւ զեղօրայք՝ վարժ երիցամբք»(28)։

Յովհաննավանքի Վարդապետարանի, ինչպէս Ս. Անանիայի Անպատի Վարդապետարանի բացմամբ ու գործունէութեամբ Սիւնեաց Մեծ Անպատի Բաւեղութիւններն ու ձգտումները գտանում են արիական եւ զեկեղեցական, ինչպէս Մովսէս Տաթևացու զահակալութեամբ այդ դպրոցի ուղին Հանդիսանում է Հայ Եկեղեցու շարժիչ ուժը։ Չնայած Տաթևացու վարչութիւնը կարճատև է լինում (ընդամենը չորս տարի), սակայն մեծ է լինում նրա արդիւնքը եւ մնայուն, որովհետև յանձինս իբ աշակերտ եւ յաջորդ զահակալների՝ գտնում են նախ գործին ու նպասակներին յարած ու գնահատող մարդիկ։

Յովհաննավանքի իմիամենի Վարդապետարանը Հանդիսանում է Ժէ Դարի Հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող Հայ դպրոցների մայրը եւ օրինակը, որտեղ հասաքունած բազմաթիւ մանուկները կրթւում եւ մարդուում են եկեղեցական գիտելիքների մէջ։ Նրա բոլոր ծախսերը Հոպում էր կաթողիկոսը իբ անձնականից՝ կաթողիկոսարանի հաշուին(29)։

Նոյն դպրոցի մասին ժամանակակից յիշատակագիր Դուկաս Գաւնեցի 1631 թուին Հեռեւեալն է տուում. «Եւ արդ, եղև սկիզբն եւ կատարումն այսմ գծադրութեանս ի յերկիրս Այրարատեան, ի յոտս Արազածու ի սահմանս գիւղաքաղաքին Կարբու՝ ի Հրաշարնակ մենաստանս Ս. Կարապետի, ընդ Հովանեաւ բարձրաբերձ երկնահանգէս սուրբ Աստուածածնի տաճարիս, որ մակագրեալ յարջորջէին Յովանավանք, որ է այժմ դպրոց, եւ ժողովեալ կան յուլով Համբակատիպ մանկունք ի յուսումն եւ ի վերժանութիւն ասասլաւաշունչ գրոց՝ Հրամանաւ եւ ծախիւք տեսուն Մովսէսի կաթողիկոսի ընդհանուր հայկապետան սեռի կրկին լուսաւորչի...»(30)։

Փիլիպոս կաթողիկոս Յովհաննավանքի այս դպրոցը փոխադրեց իմիամենին, այնտեղ վանահայր եւ դպրոցի տեսուչ թողնելով Զաքարիա Վա-

(27) Ալօյանեան Ա., Առջը, էջ 448:
 (28) Գաւրիթեցի, Առջը, էջ 307:
 (29) Գաւրիթեցի, Առջը, էջ 307:
 (30) Մատենադարան իմիամենի, հմբ. 2872:

դարչապատոցուն, որը բարեխղճօրէն պահպանում է վանքի գլխաւորական աւանդութիւնները, այս անգամ ո՛չ թէ որպէս Կաթողիկոսարանի պաշտօնական Վարդապետարանի, այլ որպէս բաղմաթիւ գործող դպրոցներից մէկի: Այդ դպրոցի աշակերտներից մէկն է Զարարիա սարկուսայ պատմիչը, որն իր ուսուցչի գործունէութեան մասին գրում է. «Հաստատեաց եւ դպրատունս եւ զնուստութիւնն իմ կարգեաց ուսուցիչ մանկանց»(31):

Այսօրայան անդրադառնալով Զաքարիայի այս տողերին, գտնում է թէ Յովհաննավանքի այս նոր դպրոցը զուտ ժողովրդական էր եւ կապ չուներ Հոգեւորականներ պատրաստելու գործին հետ: Այս կարծիքը մասամբ միայն ճիշդ է: Վանական դպրոցները միշտ էլ առաջնահերթ նպատակ են ստեղծել կրօնաւորներ պատրաստել, որոնք Մովսէս Տաթևացիի դպրոցի դուռը բացում է անխտիր բոլոր Հայերի առջև, հոգեւոր սուպրէզի ընտրութիւնը թողնելով աշակերտի կամքին: Սա աւելի չուտ ուսման ընդհանրացում է նշանակում: Լուսամբոս Հայրապետի նպատակն էր լուսաւորել իր աղբր, դրա հետ դուրսընթաց պատրաստել Հասարակական գործիչներ՝ հոգեւորական եւ աշխարհիկ կեանքի ու գործունէութեան համար:

Այսպէս, էջմիածնի դպրոցից դուրս եկած աշակերտների ձեռքով սկսում է վերանորոգչական մեծ մի աշխատանք. «Շինեցան եկեղեցիք ի վեղաստանս, զարդարեցան՝ վանօրայք պարկեշտակրօնիւք եւ առաքինացան միայնակեցք եւ զի՛ է քեզ, գրեթէ ամենեւիմք առաքելանման էր շնորհաց տարածումն»(32):

Գ Լ Ո Ւ Խ Է

ՎԱՐԳԱՊԵՏԱՐԱՆԸ ՓԻԼԻՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՎ (1633 - 1655)

Նախքան Փիլիպոս Աղբակեցու դպրոցական գործունէութեան մասին խօսուելը, աւելորդ չի լինի մի քանի իտօք ստել նրա անձի եւ հեղինակութեան մասին, որովհետեւ գործը լիովին ճանաչելու, արժեւորելու եւ գատելու համար հարկ է յաւաստէս ճանաչել այն մէջտեղ բերող տեճն ու պայմանները:

Փիլիպոս Աղբակ գուառի Երնկան գիւղից էր: Տասնչորս տարեկան հասակում զնում է Սիւնեաց Մեծ Անապատը, բայց փոքր տարիք ունենալուն պատճառով չի ընդունւում աշակերտութեան մէջ: Ութը ամիս նա վանքից դուրս է մնում, բայց չի կտրում նրա շրջապատից: Այդ ժամանակ Մովսէս վարդապետն է գալիս արտասահմանից եւ Սարգիս եպիսկոպոսի յանձնարարութեամբ նրան ընդունում է իր մօտ՝ աշակերտութեան (մօնթ): Մեծանալով, հետեւում է Անապատի ուսման ընթացքին. աւարտում է այն, ՎՕրհնեցին զնա արեղայ կուսակրօն քահանայ, եւ նա ի տունէ եւ ի գիշերի հետեւէր ճգնողական վարուց եւ գործոց առաքինութեան, եւ յրնթերցումն եւ յու-

(31) Զաքարիա Սարկուսայ, «Պատմութիւն», Գ. ԺԶ:

(32) Մատեոսգարամ, Ձեռագիր ԲԻԸ 2300:

սումն աստուածային գրոց: Զորոյ յառաջդիմութիւնն տեսնելով վարդապետին Մովսէսի՝ իւրով հասնուեթեամբն եւ վկայութեամբ ամենայն եղբարաց, ետ նմա իշխանութիւն վարդապետական, եւ յետ ամաց ինչ զգաւազան վարդապետական, եւ ի Ռէթ Թուին որհնեաց զնա Լպիկոպոս(1):

Փիլիպոսը իր ժամանակի ուսեալ Հոգեւորականներից է եղել՝ «էլուսաւորէր զամենայն մարդիկ իրրեւ դարեզակն», որով եւ ստանում է ողջ Հայրութեան յարգանքը: Խնամքով կրթուած նորարաց Վարդապետարանի իտէալներով եւ իր մեծամաստակ ուսուցչի օրինակով, Փիլիպոս Աղբակեցի ջանաց լրատ ամենայնի արժանաւոր կերպով ի սպաս զնեջ իր բոլոր ընդունածը իր սիրելի ազգի բարօրութեան համար: Եւ պէտք է ասել, որ նա հասաւ իր նրպատակին:

Ժամանակակից մի յիշատակագիր (1651) հետեւեալ զնահատականն է տալիս Փիլիպոս Աղբակեցու կաթողիկոսական եւ դպրոցական գործունէութեան. «Նուսուցեալ յաթո՞հ հայրապետութեան զհայրն մեր, զտէր Փիլիպոս վարդապետն ի Թուին Ռէթ ամին, յոր եւ սկիզբն կաթողիկոսութեանի բարոյ-դորացաւ եւս հանդէսի կրօնիւք եւ ամենափայլեալ քաղաքավարութեամբք, եւ ելից աշխարհս ողիղ կարգօք եւ կրօնաւորօք, եւ ընդարձակեաց դպրոցո եւ դասատունս եւ ժողովեալ յորով մանկունս, տայ յընթերցումն աստուածային բանից, յորոց ժամանեալ յարրունս ուսման եւ հասակին պարզեւէ արժանաւորացն իշխանութիւնս եւ շնորհս, եւ միճակս որք արձակեցան ի բարգո՞ւ տեղիս եւ տակաւինն եւս դիտեն արձակելոյ(2): Այս վկայութեան մէջ շեշտուած է, որ Փիլիպոս կաթողիկոսի ժամանակաշրջանում բնդարձակում է նա դպրոցները եւ կրթուած Հոգեւորականները բարձրանում են, ինչ որ հաստատուած պատմական մի իրողութիւն է:

Փիլիպոս կաթողիկոս Աղբակեցի, ինչպէս վկայում է Դաւրիժեցին, «չյեռ ամաց ինչ», ենթադրաբար 1640 թուին, Յովհաննափանքում գործող կաթողիկոսարանի Վարդապետարանը մերջնականապէս փոխադրում է Էջմիածին:

Այդ մասին շատ յայտն է Դաւրիժեցու ցուցմունքը. «Եւ զպարտունն զոր ի Յոհաննափանք հաստատեցին. սա եւս կարի հաստատեալ, եւ ուսմամբ եւ աւաքինութեամբ վարժեալ հատոյց ի կատարելութիւն. եւ յետ ամաց ինչ փոխեաց ի Յոհաննափանից եւ երբ ի սուրբ Էջմիածինն, եւ անդ կարսեաց դպրոցն, որ եւ ամենեքեան ուսան եւ եղեն արք պիտանիք, վարդապետք եւ եպիսկոպոսք, եւ քահանայք: Եւ ի վաղնջուց խափանեալ վանօրայք յցան աւրեղայիք, եւ դիւղք, եւ քաղաքք երիցամբք, եւ դեռ եւս օր յաւուր անէ նորին սահմանադրութեամբ(3):

Աղբակեցու ժամանակ Վարդապետարանը տեղաւորուած է Մովսէս Տաթևացու կառուցած շինութիւններից մէկում, վանքի արեւելեան թեւում: Աղբակեցին այն աստիճան ազատամիտ եւ ուսման սիրող էր, որ թալլ տունց Պօղոս Պիրոմալի լատին միսիոնարին իր Վարդապետարանի մէջ գասաւանդելու: Ոսկան Վրդ. Երեւանցին հետեւել է այս դպրոցի դասընթացներին(4):

Նոր Վարդապետարանի սիւնն է հունդիսանում Ոլմէնն Վարդապետ

(1) Դաւրիժեցի Ա., «Պատմութիւն» Վաղարշապատ, 1806, էջ 315:
(2) Մաշտոցի Անուան Մատեմագրամ, Ձեռագիր ԹԻՄ 1502, էջ 628ա:
(3) Դաւրիժեցի, Յոյճք, էջ 325:
(4) Չամչեան, «Պատմութիւն», Հատ. Գ, էջ 622, 638, 640:

Ջուզայեցիներն)։ Նա ընդգծելով մերոյ դատարանի է էջմիածնում, նոյն ժամանակ վարելով աստիճանական պաշտօններ էլ, Երևանցիք շատ հաւանելով նրա վարքին և բնավարութեանը, խնդրում են կաթողիկոսից նրան իրենց աստիճանը նշանակել։ Հայրապետը ընդառաջում է նրանց խնդրանքին։ «Ըստ խնդրոց նոցա արար այնպէս, ասաքեաց ի վանն նոցա, որ է գաւառին Գաւանայ, անուամբ Ս. Ամենափրկչի, որ մականուամբ Հաւուց Թառն»(6)։

Չամչեանն էլ վկայում է Վարդապետարանի էջմիածին փոխադրուելու մասին. «Երոց Փիլիպոս կաթողիկոս և ղարատուն մեծ յէջմիածին, ուր ժողովեալ զմանկունա ետ ժարգել զնոսա յաւուսմն, կարգեալ նոցա գասասառ զՍիմէոն վարդապետ Ջուզայեցի, գաշակերա Մեղքիւէթ վարդապետի, որ եւ յետ ուսուցանելոյ նոցա զարուեստ քերականութեան էլ անտի և շրջեալ յայլ և ասլ տեղիս՝ Հուսի յետոյ զնաց յեւզովիս և անց մեռաւ յամի 1627»(7)։

Սիմէոն Ջուզայեցու ուսումնական գործի մաս է կազմել նաև գաւառաբերի գատարանութիւնը։ Այսպէս, Հաւուց Թառնում նա գրի է գրել տաքին գրոց՝ իբր ներածութիւն այդ անուան տակ ասանդուամբ ասարկաների և «Տրամարանութիւն»։ Տպագրում է նաև Պրովիդ վրացերէնից Թարգմանուած իմաստասիրական մէկ երկը։ Սիմէոն Ջուզայեցու գրական վաստակի մասին լուրջ դատմասիրութիւն ունի Վ. Չալոյխանը (Պատմա-Բանասիրական Հանդէս, 1958, էջ 136-141)։

Այսպիսով, Հարանի Անապատի և Ամրոսլուի վանքի դպրոցներում կրթուած մեծ ուսուցիչը՝ Մեղքիտեղեկ Վեանցին, հանդիսանում է զլիաւոր ուժերից մէկը էջմիածնի նոր Վարդապետարանի ստեղծման գործում, այդ երկու բարձր դպրոցների լաւագոյն ասանդութիւններն ու ձգտումները խտացնելով այս նորի մէջ։ Այս մեծ ճիշդ տուեց իր մեծ արդիւնքը։ Մեր յիշած լաւաւոր անուններից բացի, այս դպրոցին ենք պարտական նաև Ջուզայի ղարոցի ծաղկումը, որի հիմը դրեցին Խաչատուր Կեռարացին, Ոսկան Երևանցին, իրենց մօտիկ այլ գործակիցների հետ միասին է էջմիածնի ղարոցը իր այս մեծ յաղոթութիւնը պարտական է այն իրողութեան, որ շարժումը զայլիս էր Հայութեան ամէնից հարագատ և գիտակից երկու շրջաններից՝ Միւնիքից և Վասպուրականից։

Դիտելի է մի հանգամանք ևս։ Դա այն է, որ Փիլիպոս կաթողիկոսի ժամանակ ոչ միայն դպրոցների թիւն է շատանում, այլ նաև աշակերտների դիտութեան սահմաններն են ընդարձակուում։ Դպրոցի շրջանաւարտները ժամանակի ամէնից գիտուն մարդիկը լինելով, իբրև հոգեւորական գործելիս հասկանում և զնահատում էին ուսման տեղն ու դերը։ Կաթողիկոսն էլ գիտէր մարդկանց տեղաւորել իրենց ամէնից անլի յարմար տեղին ու պաշտօնին, որով լաւագոյն կերպով գրաւորում էին նրանց ուժերն ու գիտելիքները։ Դաւիթ Բաղիշեցին Փիլիպոս կաթողիկոսի պատրաստած աշակերտներին Թուարկիլուց յետոյ, արդար Հիացմամբ և հպարտութեամբ բացազանջում է. «Այլ և զԹիւ վարդապետաց ժամանակի սորա ո՞ կարէ ընդ գրոյ վարկանել, զի ձեռնադրեաց սա անլի քան զչորս հարիւր եպիսկոպոս և արդապետ, որոնց ամենեցուն վերակացու և գլուխ Յակոբ վարդապետ Ջուզայեցին»(8)։

(6) Աճառեան Ա., «Հայոց Անճանոնների Բառարան», Հատ։ Դ, էջ 516։
 (7) Տաշեան, «Մայր Ծուցակ», էջ 365։ Դատրիժեցի, Յոյնը, էջ 405։
 (8) Չամչեան, Յոյնը, էջ 619-620։
 (9) Աճառեան, «Երևան Հայոց Պատմութեան», Գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 51։

Փիլիպոս կաթողիկոսի զպրոցական գործունէութիւնը ժամանակաւորապէս ընդհատուած է Ֆի Դաբի երեսնական թուականներին, երբ Հայաստանի տրիւնալի թատր հանդիսացաւ Սուլթան Սուրառ Զորքորդի եւ Շահ Ալֆրի Տղած գիշախանն կոխներին: Իրանը վերջացան ի նպատակագրութիւնների եւ Արեւելեան Հայաստանը աւելի քան 80 տարի եւս մնաց նրանց անձրցակից տիրապետութեան տակ. տիրապետութիւն՝ որը որքան էլ դժգոհան եւ ստրկացուցիչ, զոնէ զերծ էր ասորմական սրերի ձախարակչ տարտախներից եւ հնարաւարութիւն էր առիտ մի կերպ շարունակել սկսուաւ՝ Վերականգնող գործը:

Մայր Աթոռի արտաքին բարեգործութեան Վազուր Մայր, Վերականգնող վերակառուցման գործունէութիւնը կրօնա-քաղաքական կեանքը եւ գոտնում է հզօր մի գործած մեր ժողովրդի վերագործածքը նախադասարարական հարցում: Հետեւեցինք Մայր Աթոռի այս շրջանի գանազան վարդապետարանների աշխատանքին եւ նշեցինք նրանց բարեբար գերբ մեր ժողովրդի կ'անգամ: Այս զպրոցներից զուրտ եկած գործիչները տարածուեցին թեմերում եւ Մայր Աթոռի օրինակով կրթական կեանք ու գործունէութիւն կազմակերպեցին ամէնուրեք: Մայր Աթոռում եւս ստեղծուեց կլիռ ու հեղինակութիւն ունեցող մի միաբանութիւն: Դաւիթ Բաղդիւնցիին ցնծութեամբ աւանում է այդ ուրախալի երեսոյթը. «Այդ մերովք տեսանեմք է Ս. Էջմիածին անթիւ վարդապետը եւ արեղայց խորագանազնետը, կրօնաւորք աւելի քան 5000»⁽⁹⁾: Ընթերցողին զուցէ յախազանցութիւն թուի այս պատկանելի թիւը, սակայն, այնուամենայնիւ ճիշդ է այն, եւ այս ժամանակ գրագուտ միաբանների թիւը շատ մեծ էր Էջմիածնում: Իրանը պարսպում էին ընթերցանութեամբ, գանազան գիտութիւնների ուսումնասիրութեամբ, հազուադիւս եւ շատ զործածական գրքերի արտադրութեամբ: Արժէ յիշատակել, որ 1616 թուականին Առաքել անուով մի արեղայց արապերէ է մի ջերականութիւն, Սահմանաց Գիրք, Պորփիր, Տոմար, Մեկնութիւն Սաղմոսաց, Տրամաբանութիւն եւ այլն: Թուարկուած գրքերը ցոյց են առիտ ոգտապաշտ նկատումներով կատարուած ծրագրային աշխատանք, գործող զվարդում դասադրքեր ունեւնալու յայտնի ցանկութեամբ: Յետոյ, եթէ մի Առաքել արեղայց արտադրել է այդքան գիրք, ինչ են արել հազար նրա ընկերները բոլորը միասին վերցըրած: Ահապայայտ որ գրանց մեծ մասը ամենակուլ ժամանակը ոչնչացրել է անհետ եւ մեծը այսօր չենք կարող արդար դնահատականը տալ կատարուած աշխատանքի եւ աշխատողների մասին: Մատենադարանի թիւ 981 ձառնցի յիշատակարանում գրուած է (1633), որ այս ժամանակ զանազան տեղերից հաւաքուած էին զբոս նմին եւ զգրեանց բազմութիւնս զանազան մասանից առ ի յրումն հոգեւոր եւ մարմնաւոր ախորժակաց հասարակաց»⁽¹⁰⁾:

Այդ բոլոր ձեռագրերի վրայ առանձին հոգս էր տանում ինքը՝ ուսումնասէր Փիլիպոս հայրապետը: Կաթողիկոսի իսկ յորդորանքով գրուած է մեր յիշատակած թիւ 981 զեղեցիկ ձառնցը, նրա հետ նաեւ բազմաթիւ ժամագրքեր, ծիսական-կրօնական գրքեր, որոնք առանձին ջանքերով, մանրազրկեալ ճշգրտութեամբ եւ նկարագրող պատրաստում էին Մայր Աթոռում: Այդ գրքերից բախտաւոր փրկուածները այսօր կազմում են Երեսանի Մեարակ Մաշտոցի Անուան Մատենադարանի Հայ գրչութեան լուսագոյն նմուշներից ամենքը:

(9) Ազոնեան, հոյնը, էջ 52:
 (10) Մատենադարան, Ձեռագիր թիւ 981, էջ 500բ:

Փիլիպոս կաթողիկոսի ժամանակ Վարդապետարանը հասցրեց մասնակաւոր գործիչների մի հոյակապ սերունդ: Դաւիթ Բաղիչեցին, մեծ հայրապետի ձեռնասուններից մէկը, այդ փառանքի մասին գրում է. «Էին յաւուրս սորա անուանի վարդապետք. նախ Յակոբ վարդապետ Ջուղայեցի, որ յետոյ կաթողիկոս. Ջաքարիա Վաղարշապատցի, Ռաչատուր Ադուլեցի, Եսայի Երնջակայ, միւս Ռաչատուր Ասպահանցի, Գրիգոր Կեսարացի, Կարապետ Մոկացի օձեալ ձեռամբ սորա. Յովհաննէս Ուսանցի, Բարսեղ առաջնորդ Ամբոյ, Գաւրոցի Ռաչատուր վարդապետ Բուժիկ Յովհաննէսի աշակերտի Բարսղի, որ շինեաց զԱմբոյու Ս. Յովհաննէսն այս Ռաչատուր եւ Յովհաննէս Բաղիչեցի եւ Մարոյ վարդապետ քաջ քարոսդարն եւ լրեալ շնորհօքն հոգւոյն սրբոյ Բաղիչեցի, որ թուին ՌՁԵ (1636) օձեալ եղև և պիսկոպոս եւ նոյն աւուր ընկալեալ զաւագան վարդապետութեան ձեռամբ այս Փիլիպոսի սրբազան կաթողիկոսի եւ շնորհեալ առաջնորդ մայրաքաղաքին Բաղիչու. . . այլ եւ զթիւ վարդապետաց ժամանակի սորա ո՞ կարէ ընդ զրով արկանել. զի ձեռնագրեաց աւելի քան զչորս հարիւր եպիսկոպոս եւ վարդապետ որոց ամենեցուն վերակացու եւ զլուխ Յակոբ վարդապետ Ջուղայեցին էր»(11):

Գ Լ Ո Ւ Խ Ը

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ ՅԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՕՐՈՎ

(1655 – 1680)

Մատենադարանի թիւ 981 ձաշոցի յիշատակարանի հեղինակը հիացմունքով է ոչլուում Յակոբ կաթողիկոսի զահակալութիւնը. «... Յաջորդէ զթոռա Լուսաւորիին՝ բարեփառ եւ երջանիկ Հայրապետն Յակալորս, յամի հազարերորդի հարիւրերորդի եւ չորրորդի թուականութեան Հայկական սեռի»(12):

Ըստ պատմական տեղեկութիւնների, իր նախնիքը Շիրակից են, սակայն ինքը ծնուել է Հին Ջուղա:

Յակոբ Դ Ջուղայեցին (1655–1680) իրուամբ համարում է Հայ Եկեղեցու իր դարի բազմադրին հողեւորականը: Ուսումը ստացել է Նոր Ջուղայի եւ Էջմիածնի դպրոցներում, Ռաչատուր Կեսարացու եւ Փիլիպոս կաթողիկոսի շնչի ներքոյ: Ջաքարիա պատմիչը հաղորդում է, որ Ջուղայեցին Ռաչատուր Կեսարացուց «ուսաւ զամենայն վարս առաքինութեան եւ զամենայն դիտութիւնս աստուածային զրոց եւ եղև կուսակրօն քահանայ»:

Դաւիթ Բաղիչեցին էլ թուարկելով Փիլիպոս կաթողիկոսի ժամանակի նշանաւոր եւ դիտուն վարդապետներին, նրանց զլիաւորն է համարում Յակոբ Ջուղայեցուն. «Էին յաւուրս սորա (Փիլիպոս կաթողիկոսի) անուանի վարդապետք, նախ Յակոբ վարդապետ Ջուղայեցի, որ յետոյ եղև կաթողիկոս»: Յիշելուց յետոյ թէ Փիլիպոս կաթողիկոսը աւելի քան 400 հոգեւորա-

(11) Ազաճեան, հոյնը, էջ 51:

(12) Մատենադարանի Ձեռագիր քիւ. 961. տե՛ս Յան Արարատ, 1888, էջ 428:

կան աշակերտներ է հասցրել, աւելացնում է. «Որոց տմենեցուն վերակա-
ցու եւ գլուխ Յակոբ վարդապետ Զուղայեցին էր»(2) :

Համաձայն այս նշուած աղբիւրի, Յակոբ Զուղայեցին իր ուսուցչի
վերջին տարիներին եղել է էջմիածնի Վարդապետարանի գլխաւոր դասա-
խօսն ու վարիչը, կաթողիկոսի աջ բաղակր նրա վարչական եւ դպրոցական
գործունէութիւնների մէջ :

Յակոբ Դ Զուղայեցին աւելի մեծ հոսանքով առաջ է մղում հայրա-
պետանոցի Վարդապետարանը իր կաթողիկոսութեան ժամանակ եւ այն
հասցնում շտեմնուած մի բարձրութեան : Հարստանում, ճոխանում է նաեւ
վանքն ու հայրապետական Աթոռը : Մի յիշատակագիր այսպէս է նկարագրում
այդ. «Սոգաւ եւ ի ձեռն սորին յաւելուն եւ սղասք յոլովք եւ անօթք բարձա-
թիւք մեծի տաճարիս, ընդ որս եւ ժատենից զուսարութիւնք ի մի ոչ սակաւք
եւ նոցին խոկացողք եւ ի նոյնս պարապողք յոգնակտճառք»(3) :

Զուղայեցու օրով Ս. էջմիածնի փառքն էր հանդիսանում Ստեփա-
նոս վարդապետ Լեւոնցին, որը ծնունդ էր Լժով քաղաքում, Ժի Դարի առաջին
տասնամեակում, մեծահարուստ ընտանիքում : Լինելով բարեպաշտ ծնող-
ների զաւակ, նա մանկուց վայելեց եկեղեցու բարերար ազդեցութեան բա-
րիքները եւ մեծացաւ այդ մթնոլորտում : Նա սովորեց Լժովի բարձրագոյն
դպրոցում, հմտանալով լատին լեզուի մէջ : Յատկապէս հետեւել է փիլի-
սոփայական գիտութիւններին եւ նկարչութեան, Լեւհասայերի ձուլման, Նի-
կոյի Թորոսովիչի պատճառած տակնուվրայութիւնների հետեւանքով սուր
կարեք զգացուեց Հայպիտութեան մէջ պարզացած եւ լատին կրօնաւորների
հետ մրցելու, նրանց դէմ Հայ Եկեղեցին ու նրա հօտը պաշտպանելու կարող
տեղացի անձնաւորութիւնների : Այդ կարեքը բաւարարելու մտքով Ստեփա-
նոսը գալիս է էջմիածին : Լինելով ի ծնէ ուշիմ եւ ընդունակ, յաջողութեամբ
տիրապետում է հայերէն լեզուին, մաքուր եւ կանոնաւոր գրաբարին, սա-
կայն այլեւս չի վերադառնում Լեւհաստան, այլ մնում է էջմիածին եւ Փիլի-
պոս կաթողիկոսից վարդապետ ձեռնադրուելով նուիրում է կրթական գոր-
ծին : Որպէս Մայր Աթոռի միարան եւ գիտուն մարդ, նա շուտով տիրանում
է մեծ Համբարի, որը օր առօր մեծանում է : Այդ բանում պակաս զեր չեն
խաղում նաեւ նրա վարչական կարողութիւնը եւ զբաղման-թարգմանական
գործերը : Նրա թարգմանութիւններից են. «Յովսէփոսի պատմագրութիւն»,
«Ճի գրոց պատճառաց Արիստոտելի կամ ոճանց թուի Պրոկլի», «Գիրք քնազ-
դական Արիստոտելի և լուծմունք նորին», «Բանք իմաստասիրականք և աստ-
ուածաբանականք համառօտարար իբր ոսհմամօրէն արտադրեալք եւ հաւաք-
եալք ըստ այբուբենից» : Սրանք զուտ փիլիսոփայական աշխատութիւններ
էին, իսկ նրա կրօնական-աստուածաբանական թարգմանութիւններից յայտ-
նի են «Գիրք սրբոյն Դիոնիսիոսի Արիստպագացւոյ յաղագս երկնայնոց քա-
հանայպետութեանց», «Հայելի վարուց որ կոչի Տրտնկաց հարանց վարք»,
«Համառօտ հաւաքումն յաղագս հոգևոյ բանականի», (Թովմա Աղուիխայցի),
«Համառօտ հաւաքումն յաղագս Հրեշտակաց», «Բուրաստան աղօթից» : «Գիրք
Յեսուայ սրգւոյ Սիրաքայ» աստուածաշնչական գրքի թարգմանութիւնը այս
չարքում յատկանշական տեղ է բռնում : Նոյնը կարելի է ասել Դուրանի թարգ-
մանութեան մասին, որը վերնադրուած է «Գիրք օրինաց Հաղարայցուց կամ
Իսմայելացուց որ կոչի Դուրան, այսինքն, հաւաքումն պատուիրանաց,

(2) Ազմնամ, «Դր.ան...», Գիք Ժ, էջ 61 :
(3) Մատնադարան, Զեազգի քիւ 881. տե՛ս նաեւ Աբրաքոս, 1888, էջ 428 :

Թուրգմանեցաւ ի լատինացոց բարբառէ ի լեզու Հայոց աշխատասիրութեամբ իմաստասէր Ստեփանոս Լեւազոս» :

Այս բարգմարդին փոխտփայ գործիչը, որ ժի Դարի Հայոց գրականութեան առաջնահարգ զարդն է կազմում, ազդեցութիւն ու յիշատակ է թողել նաեւ իբրեւ նկարիչ: Վախճանուել է 80 տարեկան հասակում, 1680 թուին եւ թաղուած է Ս. Ղոխիսիմէի վանքի գերեզմանատանը(4):

Ստեփանոս Լեւազոս յիշատակած Թարգմանութիւնների գիտական արժէքը մանրամասն վերլուծութեան է ենթարկուած փոխտփայտութեան գուրտոր Վազգէն Չալոյեանը(5):

Ստեփանոս Լեւազին իր Թարգմանութիւնները կատարել է էջմիածնի գարոցի ուսումնական հարգարանի բարձրացնելու համար եւ այդ զրգերից ոմանք օգտագործել է որպէս դասագիրք: Իր օրով էջմիածնում հաւաքուած գրասէր եւ գիտնական վարդապետների մասին ուշադրութեան արժանի տուեալներ է հաղորդում ինքը՝ Ստեփանոս Լեւազին, իր «Դիտնխիտոս Արիսպագացու» ուշխատութեան 1662-ին լատիներէնից կատարած Թարգմանութեան յիշատակարանում, որտեղ սաւուած է, որ Թարգմանութիւնը կատարել է զի խնդրոյ բարեմիտ եղարցն, որք ի Սուրբ Աթոռս էջմիածին, ի հրահանգս իմաստասիրութեան կրթէին զանձինս իւրեանց: Քանզի զայսու ժամանակաւ բազումք էին երեւելիք վարդապետք քաջարանք, բանաստեղծք, աստուածային գրոց յա՞ դիտունք եւ հմուտք, յորոց մի էր Առաքել վարդապետն, քաջ բարունի եւ վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց եւ թագաւորոց գեղեցկայարմար բանիւք զըրոճեաց եւ իւր յիշատակն անջնջելի եթող»(6):

Լեւազոս ակնարկած Առաքել վարդապետը Դաւրիթեցին է: Նա ծնունել է ԺՁ Դարի վերջում, Թաւրիք քաղաքում: Ուսումն ստացել է Ս. էջմիածնում, Փիլիպոս կաթողիկոսի հովանու տակ, ձեռնադրուել է վարդապետ: Վարել է զանազան վարչական պաշտօններ: Յակոբ կաթողիկոսի ժամանակ եղել է Վարդապետարանի քուսուցիչ: Նշանաւոր է իր գրած «Պատմութիւն»ը:

Ստեփանոս Լեւազին սիրուած ուսուցիչ է եղել: Աշակերտները աւելի ընդունակութեամբ նրա գովքը երգելու: Նա դասախօսութիւններին նպաստելու համար կազմակերպում է վանական-գարոցական ինժամուած եւ շատ հարուստ պարզաբան, որի ղեկավար է նշանակուած իր ընդունակ աշակերտներից Ներսէս սարկաւազին: Մի յիշատակարանում ներսէսը գրում է. «Եւ, ամենամեղ եւ ընչինս ներսէս ծառայ ձեր եւ աշակերտ սրբոյ Թարգմանչի քաջ հետորի եւ անյաղթ փոխտփայտի, թելադրողի հրահանգիս Ստեփանոսի Իլովացույ եւ բանիլուծ վարդապետին...»: Մի ուրիշ տեղում՝ «Ձուսուցիչն իմ եւ զվարժիչն զՍտեփանոս Իլովիցի քաջ հետոր եւ թարգմանիչ բարունին, որ էր այր լի շնորհք եւ հանճարով եւ սրբատւ հոյւսով սրբով, զի հասակազ ըստ աստուածաւոր պարյեւօք զամենայն եղբարս կատարելագործէր փոխտփայտական կրթութեամբ եւ թէպէտ հուակ յետին զիս: Վասնորոյ հայցեմք ի Տեառնէ Քրիստոսէ մերմէ զի յորժամ նստի յաթոռ փառոց հաստուցէ զվարձս սարին միոյն հաղարապատիկ բիւր եւ բիւրապատիկ եւ գիշատակն իւր անիրամատելի պահեսցէ»(7):

(4) Ընդ. «Հայոց Պատմութիւն», Հատ. Գ, Երևան, 1946, էջ 420:

(5) Պատմա-բանասիրական Հանդէս, 1958, Թիւ 1, էջ 141-140:

(6) Մատենադարան, Ձեռագիր Բիւ 5171, Բերք 388բ-360ա:

(7) Մաղիճադարանի Ձեռագիր Բիւ 110, էջ 465բ, 466բ:

Այսօր 57 ձեռագիր մատենաներ կան Մատենադարանում պահպանվող, որոնք բոլորն էլ յիշատակուած ժամանակաշրջանում են արտադրուել Ս. Էջմիածնում: Բեղուն է եղել Լեւոնու եւ նրա աշակերտների դործունէութիւնը, որոնց գրչին են պատկանում յիշատակուած ձեռագրերից շատերը:

Այդ ժամանակ Ս. Էջմիածինն ունեցել է իր դրատունը, սրբ արդէն Հանդիսացել է մի կարգաւորուած հաստատութիւն եւ ունեցել է իր յատուկ դրժապահը՝ Լեւոնու աշակերտներից մէկը՝ Ներսէս սարկաւադր, որը 1662 թուականին ընդօրինակուած մի ձեռագրի յիշատակարանում իր մասին թողել է հետեւեալը. «Այլ եւ դիւ տարրոշեալս ի սոցունց զգրքապահ եւ զծրոց մատենիս զՆերսէս յիշել մաղթեմ ընդ սոցին...»(8):

Կան տուեալներ, որոնք հաստատում են թէ Ստեփանոս Լեւոնցին մի սոսկական ուսուցիչ չէր Վարդապետարանում, այլ նրա հոգին ու ղեկավար վերահասուչը, մինչեւ իր մահանունը:

Յակոբ կաթողիկոսի օրով Էջմիածնի Վարդապետարանը հասել էր ցանկալի բարձրութեան: Վայելում էր կաթողիկոսի լայն հովանաւորութիւնը եւ բազմաթիւ կարող ուսուցիչների անխոնջ ու բարուած աշխատանքի պրտուղները: Ժամանակի դիտութիւնը կեդրոնացել էր Էջմիածնի Վարդապետարանում եւ աւանդում ձեռնհասօրէն: Միւս՝ նոյն տիպի հայկական զբարոցները արդէն մնում էին ստուերում: Մովսէս Տաթեւացոց սկսած մինչեւ Միմէոն Ջուղայեցին, Էջմիածնի Վարդապետարանը անընդհատ վերելք է ապրում: Ժամանակակից գրողներն ու պատմաբանները բառ չեն գտնում որովհրու համար յատկապէս Միմէոն Ջուղայեցուն: Վարդապետարանում կարեւոր դեր են կատարել նաեւ Ներսէս սարկաւազը՝ որպէս զրժապահ եւ դասախօս, եւ պատմաբան Առաքել Դաւրիժեցին՝ որպէս դասախօս: Դաւրիժեցին իր պատմութիւնը գրեց իր ուսուցչի յորդորով եւ ցուցմունքներով: Պատմութիւնը սկսում է 1602 թուականից եւ հասնում է մինչեւ Փիլիպոս կաթողիկոսի մահը: Յակոբ Դ կաթողիկոսը խնդրում է նրան շարունակել իր բազմօգուտ աշխատանքը՝ Պատմութիւնը, որին ընդառաջում է ծերունի պատմագիրը եւ գիրքը հասցնում մինչեւ 1662 թուականը: Առաքել Դաւրիժեցին վերհիմնուել է Էջմիածնում, խոր ծերութեան մէջ եւ թաղուել միաբանական գերեզմանոցում: Նրա դամբարանը այսօր էլ յատուկ ուշադրութեան առարկայ է:

Նոյն շրջանի սաներից է նաեւ Ջաքարիա պատմիչը, որի գործունէութեան մեծ մասը անց է կացել Յովհաննափնջում, որպէս վանահայր եւ ուսուցիչ: Թողել է եռահատոր մի «Պատմութիւն», որ հասնում է մինչեւ Նահապետ Ուսահայեցի կաթողիկոսի օրերը: Այդ գիրքը լոյս է տեսել Էջմիածնում 1872-ին:

Յիշելի է նաեւ Ջաքարիա Վաղարշապատցին, որին Ջարրհանախան եւ Ալիշան մի պատմական աշխատութիւն են վերադրում: Մենք Երեւանի Մատենադարանում այդ աշխատութեան հետքերը չգտանք: Հանդիպեցինք Վաղարշապատցու անունով մի քանի յիշատակարանների միայն, բայց ոչ՝ երեք կաթողիկոսների պատմութիւնը ընդգրկող ամբողջական մի աշխատութեան:

Մեզ ծանօթ Դաւիթ Բաղիշեցին գրում է. «Թուին ՌՃԴ (1655) նստաւ կաթողիկոս Յակոբ Ջուղայեցին, այր սուրբ եւ ընտրեալ յար եւ նման մեծին Մովսէսի եւ Փիլիպոսի, եւ ի ժամանակ սորա էին վարդապետք եւ միաբանք ի Սուրբ Էջմիածին. Յովհաննէս վարդապետ, Սահակ վարդապետ Աթոռա-

(8) ՆոյՁը, էջ 467բ:

կալ, Միքայէլ, Մովսէս, միւս Մովսէս, Գարրիէլ, Երեմիա, Առաքել վարդապետ պատմադիր, Ստեփանոս, Աւետիս. սոքա ամենեքեան սիւնք եկեղեցւոյ, եւ անթոք Հոգւոյն սրբոյ անյաղթ փիլիսոփայք, այլ եւ Ղազար վարդապետ, Սարգիս վարդապետ ի Թէոդոսոսպոլիս եւ Ստեփանոս վարդապետն մեր սիրելի ի Ջմիւռն քաղաք. եւ որչափ քաղաքաց առաջնորդք այժմ, աշակերտք են Յակոբ կաթողիկոսին»(9) :

Այստ Յովհաննիսեանը Բաղիչեցու հաղորդած այս տեղեկութեան առիթով անում է Հետաքրքիր եզրակացութիւններ. «Այս վկայութիւնները կարեւոր են որչափ Բաղիչեցին այն հեղինակն է Հենց, որ արժանահաւատ տեղեկութիւններ է հաղորդում ԺԾ-ԺԸ Գարրիի Հայ վանական զարոցների եւ նրանց նշանաւոր դասապետների մասին... Վանական լուսաւորութեան մի շարժում էր այս, որ սկիզբ առնելով Մովսէս Տաթեւացու ջանքերով, դարձաւ դացման բարձրակէտին Հասա Ջուլայեցու օրօք եւ Հանդամանօրէն նկարագրուած է Լեւոնու գրուած Գարրիեցու գրքում»(10) :

ԺԻ Գարրի լուսաւորութեան այս ջանքերի նպատակն էր հակադէլ դասակարգում ու բարոյակրթման այն ընթացքին, որ ծաւալուած էր վանական միջավայրում ԺԵ-ԺԶ Գարրիում : Մովսէս Տաթեւացին եւ նրա անմիջական յաջորդները, խոհեմութիւնը ունեցան իրենց տեսիլքովը վերանորոգել վանական կեանքը եւ ստեղծել արժանաւոր եկեղեցականների խումբեր, որոնք սիւսի կարողանային ապահովել վանական Հաստատութիւնների վերականգնումը : Այդ խմբից առանձն՝ Ոսկան Երեւանցին, Վանանդեցիները եւ այլն, ուշխուսեցին եւ սովորեցին եւրոպական կնդրոններում եւ իրենց կատարած սպառարկան զործով մեծապէս սատարեցին այժմայն էլ միայն էլ միաժամնի զարոյցի բարձրացման, այլ մանաւանդ ընդհանուր Հայ մշակութի վերելքին :

ԺԷ Գարրի տեսիլք ունեցող Հայ հոգեւորականութիւնը, ակառ Մովսէս Տաթեւացուց, կենսեց տուեց վանական Հաստատութիւններին, նպատակ եւ բովանդակութիւն ներշնչեց նրանց եւ այգպիտով մեծ ծառայութիւն մատուցեց ոչ միայն իր ժամանակի Հայ ժողովրդին, այլ ընդհանրապէս հետագայ սերունդներին էլ :

Յակոբ Գ Ջուլայեցու վախճանումից յետոյ սկսուած է այեկոծ մի շրջան : Եղիազար Անթապի (1681-1691) եւ Նահապետ Ուռհայեցի (1691-1706) կաթողիկոսների օրով էլ միաժամնի վարդապետարանը զգալի վայրէջք է ապրում : Դա տիրող քաղաքական պայմանների եւ եկեղեցու ներքին կեանքում գոյութիւն ունեցող պայքարների ու երկպառակութիւնների արդիւնք էր : Զաքարիա սարկաւազը այդ մասին գրում է . «Զկարգ եւ զկանոն առաջին կաթողիկոսին քայքայեցաւ ի Սուրբ Աթոռն եւ ամենայն վանօրէից» :

Բացի մանկավարժական-ուսումնա-դաստիարակչական եւ թարգմանական կամ ինքնուրոյն գրականութեան ստեղծումից, էլ միաժամնի վարդապետարանի այս շրջանի շակերտները Հայ ժողովուրդին մատուցեցին եւս մի մեծ ծառայութիւն : Դա կաթողիկ եւ բողոքական թափանցման դէմ թուր կանգնելու իմաստուն եւ ձեռնհաս կեցուածքն էր, որի վտանգը կիրիկեան արեւից յետոյ համարեալ ջնջուել էր, բայց այս շրջանին բողոքուած էր մեծ թափով յատկապէս Օսմանեան կայսրութեան հողերում, մասամբ էլ Գարրիկոստանում :

(Շար. 5)

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԻՐԵԱՆ

(9) Ազանմա, հոյնը, էջ 52:
 (10) Յովհաննիսեան Ա., «Երուսաղէմի Հայ Ազատագրական Մտքի Պատմութեան», Հատ. Բ, Երևան, 1950, էջ 104: